

# ՍՓԻԻՌԲԱՅՈՒԹԻՒՆԸ Ի ԶԱՅ ՂԱՐԱՔԱՂԻՆ ԵՒ Ի ՎՆԱՍ Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Նախ յօդուածը պէտք է սկսինք շնորհաւորելով Ս. Հայաստանը եւ իր ժողովուրդը, տարած իր մեծ յաղթանակին համար:

Մոսկուան խոստացաւ Ղարաքաղի մէջ բարգաւաճում, կառուցանել հիւանդանոցներ, դպրոցներ եւ գործարաններ, որոնց կէսը պիտի յատկացուի անդեղէնի արտադրութեան: Այս բոլորին համար Մոսկուան պիտի ծախէ շուրջ 600 միլիոն ամերիկեան տոլարի փոխարժէքը ուրիշ: Աւելին, տասնեակներով զարբարացի հայ երիտասարդներ պիտի կարենան փրենց բարձրագոյն ուսումը շարունակել Ս. Հայաստանի համալսարաններուն մէջ: Պիտի տրուի լեզուի, մշակոյթի ու կրօնական ազատութիւններ: Ղարաքաղցիները պիտի կարենան դիտել Ս. Հայաստանի հեռուստատեսութիւնը:

Այս բոլոր մանրամասնութիւնները կը նշանակեն մէկ բան, թէ Ղարաքաղը փրկուեցաւ եւ պիտի չհասնի Նախիջևեանի այսօրուան դժբախտ հայ բնակչութեան վիճակին: Այս է Ս. Հայաստանի մեր եղբայրներուն տարած մեծ յաղթանակը:

Ս. Հայաստանի մէջ պատահած դէպքերը եւ հակա- ուսական որոշ արածադրութիւնները տեղին են թէ ոչ, չա՞տ են, թէ քիչ - ա՛յս է ահա մեր հարցը:

Նախ կարեւորը, ինչպէս ըսուեցաւ, այն է, թէ փրկուեցաւ Ղարաքաղը: Մանրամասնութիւններն ու բացատրութիւնները կը ձգենք եւ պէտք է ձգենք Ս. Հայաստանի մեր եղբայրներուն ու ղեկավարներուն:

Շատ յստակ է թէ մենք՝ սփիւռքահայերս, հայաստանցիներու նման չենք կրնար եւ ոչ ալ պիտի կարենանք ըմբռնել խորհրդային ներքին քաղաքականութիւնը: Բայց եւ այնպէս, յստակօրէն կրնանք ըսել մեր հայրենիքի ղեկավարներուն, թէ հայ ժողովուրդը պէտք է պատրաստէ ինքզինք, որպէսզի կարենայ դիմակայել 21րդ դարն ու անոր բարդութիւնները: Երեւանի փողոցներուն մէջ եռադոյններ տնկելով Ս. Հայաստանը ո՛չ կ'անցնի 21րդ դար, ոչ ալ կը մնայ նոյն տեղը: Այլ կ'երթայ մէկ դար ետ...:

Այո, լաւ չենք կրնար ըմբռնել Սովետական ներքին քաղաքականութիւնը, սակայն որոշ չափով կը հասկնանք միջազգային քաղաքականութիւնը, որուն անխուսափելիօրէն կապուած է նաեւ Ղարաքաղի հարցը:

Սփիւռքահայութիւնը նախ պէտք է փորձէ տեսնել, թէ ներկայիս Ս. Միութեան մէջ Կորպաչովը ո՞ր կը գտնուի եւ իր ձայնը որքա՞ն ուժեղ է:

ա) Այսօր Կորպաչովը աւելի ուժեղ է Ս. Միութեան սահմաններէն դուրս, քան ներս: Իրրեւ թիւ, Ս. Միութեան բոլոր կառավարութիւններուն ու նախարարութիւններուն միայն մէկ-երրորդը կը գտնուին իր ազդեցութեան տակ: Կրկին, Ս. Միութեան հզօր բանակին ղեկավարութեան մէկ-երրորդէն պակասը կը գտնուի իր ազդեցութեան տակ: Նոր սկսած է իր ազդեցութիւնը թափանցել կարեւոր Ք. Կ. Պ. հաստատութեան մէջ: Շատ դժուար է Կորպաչովի համար փոխել Ս. Միութեան ղեկավարութեան մօտ տասնեակ տարիներէ ի վեր արմատական զարգացման հետեւեալն ու աշխատելու ձևը: Այսօր, Կորպաչովը ամենայն պարզութեամբ, մէկ օրէն միւսը փոփոխութեան չի կրնար ենթարկել Ս. Միութեան ներքին սահմանները: (\*)

բ) Այսօր Կորպաչովը ի վիճակի չէ նեղացնելու Ս. Միութեան իսլամ ազդերը, նկատի ունենալով իր միջազգային քաղաքականութիւնը: Ղարաքաղի հարցը անուղղակի կերպով կապուած է Աֆղանիստանի հարցին հետ: Այսօր, միայն Կորպաչովը կարողացաւ քաղաքականօրէն թափանցել Արարական ծոցը: Ղարաքաղի հարցը, կրկին անուղղակիօրէն կապուած է Արարական աշխարհին հետ:

գ) Եթէ Կորպաչովը Ղարաքաղի հարցին մէջ տեղի տայ, իր դիմաց պիտի գտնէ Էսթոնիան, Լատվիան, Լիթուանիան եւ Ուքրանիան:

Նոյնիսկ գերմարդ ըլլալու պարագային ան չի կարենար միաժամանակ պայքարել Ս. Միութեան պահպանողական ղեկավարութեան դէմ, մինչ այդ յաջողցնելով Փերեսպոյսիան ու Կլաքնոսքը, մինչ այդ սրբազրելով ստալինեան սեւ էջերը, մինչ այդ գոհացնելով միլիոնաւոր սովետ քաղաքացիներ, եւ այս բոլորէն ետք՝ ունենալ արտաքին եւ միջազգային յաջող քաղաքականութիւն, ի շահ իր երկրին:

Ի՞նչ պէտք է ընէ սփիւռքահայութիւնը եւ ի մասնաւորի անոր խարիսխը հանդիսացող լիբանանահայութիւնը այս կացութեան դիմաց:

Այսօր, ուստի Ս. Միութեան մէջ կը հաշուուին 51 առ հարիւրը: 2000 թուականին անոնք պիտի ըլլան 48 առ հարիւրը: Իսկ 2050 թուականին՝ անոնք պիտի ըլլան միայն 40 առ հարիւրը: Նոյն թուականին, ուստի օրթոթոթներն ու հայ լուսաւորչականները պիտի հաշուուին Ս. Միութեան բնակչութեան 25 առ հարիւրը, իսկ իսլամները պիտի ըլլան շուրջ 55 առ հարիւրը:

Դիւրացնելու համար Կորպաչովի գործը, ըսփիւռքահայութեան եւ լիբանանահայութեան զըլխաւոր ու կարեւորագոյն գործը պէտք է ըլլայ՝ իր ամբողջ կարելիութիւններով համոզել արեւ-

մտեան եւ արարական աշխարհը թէ Ս. Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ պայքարը կրօնական պայքար չէ, թէ երբեք չէ եղած ու պիտի չըլլայ պայքար հայ քրիստոնեաներու եւ իսլամներու միջեւ, թէ պայքարը փան-թուրքիզմի դէմ է, եւ վերջապէս՝ թէ պատահածը հայ-թուրք պայքար է:

Իսկ ի՞նչ պէտք է ընէ սփիւռքահայութիւնը. ա) Պէտք է երթայ զգացականի: Դժբախտաբար, կան սփիւռքահայ ղեկավարներ, որոնք կ'ըսեն թէ որովհետեւ Կորպաչով ինքզինք կը սեպէ արդարութեան ախոյեան, պէտք է և Ղարաքաղը տալ Ս. Հայաստանին, նոյնիսկ վտանգելով իր աթոռը: Այս երեւոյթը կը պատահի միայն ամերիկեան ֆիլմերու մէջ:

բ) Հայ քաղաքական երեք կազմակերպութիւնները Պուրճ Համուտի հաւաքին ընթացքին խօսեցան եւ միեւնոյն ժամանակ տարով բանական ու առարկայական քաղաքական զարգացումներ:

Երբ ազդեցութիւն ունեցող «Լ'Օրիան-Լը ժուր» օրաթերթը կը գրէ, թէ երեւանեան ցոյցերուն ընթացքին յաճախ կը տնկուի եռադոյնը եւ Հ. Յ. Դ. թափանցած է Ս. Հայաստան. պատկան մարմինները փոխանակ ուրախանալու եւ կրկին երազելու, պէտք է հերքէին այս լուրը, նկատի ունենալով Ս. Հայաստանի մեր եղբայրները:

գ) Ամերիկահայութիւնը պէտք է կազմէ «Ղարաքաղի ազատագրութեան» յանձնախումբեր: Ո՞վ զո՞վ կը խաբէ: Ինչպէ՞ս պիտի ազատագրեն Ղարաքաղը: Արդեօք վերջերս իրաւնոացիներու վրայ կոյր վտահոնութիւն ունենալով, «Այ. Ար. Էյ.Յ» պիտի զրկէ իր միլիոնները եւ ազատագրէ Ղարաքաղը...:

Տանելով կազմակերպուած «ըջիջային» աշխատանք, տարածելով ըսի-ըսանքներ, սփիւռքահայութեան մօտ պէտք է քաշալիւրուի հակա-ոստական զգացումներ: Այս մէկը Ս. Հայաստանի մեր եղբայրները կը վտանգէ եւ կրնայ անոնց կեանքը զարծնել դժօխային: Անգամ մըն ալ չենք տեսներ երկրորդ «Հրազդան» ֆուլբուրի դաշտ: Անգամ մըն ալ չենք տեսներ երկրորդ Արիւս-Սեւան մը: Անգամ մըն ալ չենք տեսներ երկրորդ Համալի մը: Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէն կը լուծուի եւ կապերը կը խզուին...:

Գալով անտեղի ըսի-ըսանքներուն,

Կ'ըսուի թէ Ռախա Կորպաչովը եւ թաթար մըն է: Յետոյ ի՞նչ: Ասոր դիմաց կ'արժէ յիշել իրողութիւն մը. այն ալ ազդեցիկ «Ռէօյթըր» ինչպէ՞ս՝ Սախարովի կինը...: Անունն է Ելենա Սիտորենքո: Այստեղէն իրաւունք չունի՞նք ենթադրելու կրկին թրքական-հրէական մատը: 1915ին թուրքերը գործածեցին դանակն ու կացինը, բայց սիոնիզմն էր որ դնեց զանոնք: Չկայ ՄԱԿի մէջ դոյաքած ժողով մը, ուր նոյնիսկ մէկ անգամ Իսրայէլը ունենայ հակաթուրք եւ փրօ-հայ կեցուածք: Իրաւունք չունի՞նք ենթադրելու, թէ այս մէկը թուրք-հրէական խաղ մըն է՝ ուշադրութիւնը հեռացնելու համար, Ա. Մ. Ն. ի ֆոնկրէսէն եւ «Եւրոպական Համայնք»էն, ի պնաս մեր ժողովուրդի պահանջներուն:

Ուրիշ ըսի-ըսաւ մը, թէ Կորպաչովը հայերը չի սիրեր: Նոյնիսկ եթէ ճիշդ է, երբ Կորպաչովը հարիւր առ հարիւր ըլլայ տէր ու տիրականը Ս. Միութեան, ուզէ կամ չուզէ տեղի պիտի մեր ժողովուրդի պահանջներուն առջեւ: Կորպաչովի համար, կամ Ս. Միութեան ունէ մէկ այլ ղեկավարի համար, երկու քաղաքներ կը սեպուին ամբողջ Ս. Միութեան լինելիութեան եւ պաշտպանութեան բերդերը: Առաջինը՝ Վլատիմիր Պուր, որ Ս. Միութիւնը կը պաշտպանէ Ոսկայական ովկիանոսէն: Վլատիմիր Պուր մէջ կը գտնուին 270 ուղղմանակեր, 2 հսկայ օդանաւակիրներ եւ 70է աւելի ջրածնային ուսման կայաններ: Երկրորդը՝ Երեւանն է, 26 տարիներ առաջ Գ. Համալսարանին պատերազմը պիտի սկսէր ոչ թէ Քուպայի համար, այլ Երեւանի համար... Այն ժամանակ, Փոլիթպուրոյի անդամ եւ Ս. Միութեան Համայնալար կուսակցութեան արտաքին քաղաքականութիւնը կերտող մասնաւոր յանձնախումբի անդամ՝ Քէրիմ Պուրաթաքին խոստովանած է, թէ Ս. Միութեան կողմէ Քուպայի ամբողջ «խաղը», ուր յաջողեցան Ուրուչեւ, չեզոքացնելն էր Երեւանը վտանգող Արարատ լեռան վրայ գտնուող ամերիկեան ջրածնային հրթիռները...:

ե) Պէտք է խուսափինք քաղաքական խակութիւններէ: Ամերիկահայ յայտնի ղեկավարներէն մէկը, Ղարաքաղի հարցով, նամակ կ'ուղարկէ Կորպաչովին, ամերիկացի քոնկրէսմէնի մը միջոցով: Այս մէկը կը նմանի Ուոլֆօրտի խնդրելու մը՝ պատգամաւոր զրկելով հրեայ ռապպի մը... Կաղօթենք Տիրոջ, թէ այս դէպքը քաղաքական խակութեան ըլլած ըլլայ: Որովհետեւ եթէ խակութիւն չէ, կրնայ ըլլալ միայն դիտումաւոր բացասական քաղաքական արարք:

(\*) Պէտք է նկատի ունենալ, որ սոյն յօդուածը գրուած է Քրեմլինի վերջին փոփոխութիւններէն առաջ: Մ. Խ.